Հավելված 7
**ՔՀ-ԲՄԱՇՁԲ-26/02 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

# ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՔՀ-ԲՄԱՇՁԲ-26/02-02

ք. Քաջարան «15» Հուլիս 2026թ.

Քաջարանի համայնքապետարանը,ի դեմս համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Գրիգորի Փարսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Քաջարան համայնքի Գեղի գյուղի գլխավոր փողոցի վերակառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում **ՔՀ-ԲՄԱՇՁԲ-26/02** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են համապատասխան աշխատանքների շինարարության թույլտվության տրման օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ *7 ամիս:*

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյթյունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնոթյունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ՝ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 80 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փործարկում, մասնակցել սարքավորման համալիր փործարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

*3.4.8.1 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում 1095 օրացուցային օրը՝ Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված : Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:*

**3.4.9 Կապալառուն պարտավորվում է իր հաշվին և առանց Պատվիրատուի ֆինանսական մասնակցության ամբողջությամբ փոխհատուցել ցանկացած վնաս, որը կարող է պատճառվել երրորդ անձանց՝ աշխատանքների կատարման ընթացքում իր գործողությունների կամ անգործության հետևանքով:**

**3. 4. 10 Կապալառուն պարտավոր է իրականացնել վնասի վերացման կամ փոխհատուցման բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ սեփական միջոցներով և պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետներում:**

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **103 880 150 (մեկ հարյուր երեք միլիոն ութ հարյուր ութսուն հազար մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ**, որից 17 313 358,33 (տասնյոթ միլիոն երեք հարյուր տասներեք հազար երեք հարյուր հիսունութ ամբողջ երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով

ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն իրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1. | Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 2. | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 3. | Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված և/կամ համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության դեպքերում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 4. | Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով |

| | | |
|---|---|---|
| | | սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 5. | Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 6. | Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 7. | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 8. | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 9. | Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 10. | Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո

Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և

արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 7 (յոթ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Քաջարանի համայնքապետարան
ք. Քաջարան, Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն վարչ.
հհ 900312622021
հհ 900312000327
հվհհ 09426045

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ Կապան Մ.Հարությունյան 1Ա/5
«Արդշինբանկ» ԲԲԸ Կապանի մ/ճ
հհ 2470800045720000
հվհհ 09400653

/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված թիվ 1*
*« 15 » հուլիս 2026 թ. կնքված*
*ՔՀ-ԲՄԱՇՁԲ-26/02-02 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 2՝ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԻ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

| NN ը/կ | Աշխատանքների անվանումը | Չափման միավոր | Քանակը | Միավորի ընդհանուր արժեքը հազ. դրամ | Ընդհանուր արժեքը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| I | **Հողային աշխատանքներ** | | | | |
| 1 | III 23.2 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0 կմ | մ3 | 1138 | 1,95 | 2217,78 |
| 2 | Նույնը IV12 բ կարգի գրունտի համար | մ3 | 225,2 | 2,14 | 481,81 |
| 3 | Նույնը IV5.4 կարգի գրունտի համար | մ3 | 244,7 | 2,25 | 549,76 |
| 4 | Նույնը Vբ 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 193,3 | 2,88 | 557,10 |
| 5 | III 23.2 կարգի գրունտի մշակում ձեռքով , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0կմ | մ3 | 127 | 6,73 | 854,77 |
| 6 | Նույնը IV12 բ կարգի գրունտի համար | մ3 | 25 | 15,99 | 399,74 |
| 7 | Նույնը IV5.4 կարգի գրունտի համար | մ3 | 27 | 10,27 | 277,36 |
| 8 | Նույնը Vբ 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 22 | 22,13 | 486,81 |
| 9 | Լիցքի հարթեցում և խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 4 անցումով , ջրի տարածումով | մ3 | 51,2 | 0,82 | 41,80 |
| | **1. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **5866,934** |
| II | **Ճանապարհային պատվածք** | | | | |
| 1 | Հողային պաստառի համահարթեցում բուլդոզերով ,ավազակոպճային շերտ h=12սմ | մ3 | 546,72 | 13,69 | 7482,08 |
| 2 | Խիճ h=15սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ2 | մ2 | 4556 | 3,683 | 16780,98 |
| 3 | Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ”տիպ | մ2 | 4556,0 | 6,654 | 30313,75 |
| | **2. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **54576,817** |
| III | **Կողնակներ** | | | | |
| 1 | Կողնակների իրականացում ավազակոպճից հմիջ=10սմ | մ2 | 1008,0 | 1,54 | 1549,49 |
| | **3. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **1549,491** |
| IV | **Իջատեղեր** | | | | |
| 1 | III 23.2 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0 կմ | մ3 | 141,8 | 1,95 | 276,35 |
| 2 | Նույնը IV5.4 կարգի գրունտի համար | մ3 | 18,9 | 2,25 | 42,46 |
| 3 | Նույնը Vբ 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 28,4 | 2,88 | 81,85 |
| 4 | Ավազակոպճային շերտ h=12սմ | մ3 | 56,74 | 13,69 | 776,45 |
| 5 | Խիճ h=15սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ2 | մ2 | 472,8 | 3,683 | 1741,45 |
| 6 | Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ”տիպ | մ2 | 472,8 | 6,654 | 3145,82 |
| | **4. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **6064,381** |
| V | **Ե/բ վաք 30x34սմ** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ավազակոպճային շերտ վաքերի տակ h=10սմ | մ3 | 8,80 | 14,42 | 126,94 |
| 2 | Ե/բ հավաքովի նոր վաքերի տեղադրում 34x30սմ չափսի - 160գծ. մ | հատ | 54 | 59,14 | 3193,60 |
| 3 | Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 201,6 | 1,45 | 291,65 |
| | *Խողովակ մուտքերում* | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ | մ3 | 0,70 | 14,42 | 10,10 |
| 2 | Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 12,32 | 2,22 | 27,38 |
| 3 | Մետաղական խողովակի տեղադրում d=273մմ; 1գծ.մ=կգ; δ=5մմ | գծ.մ | 14,0 | 29,1 | 406,96 |
| 4 | Խողովակների և վաքերի միացման տեղերում միաձույլ բետոն ,B 15 | մ3 | 0,20 | 127,68 | 25,54 |
| | **5. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **4082,156** |
| **VI** | **Ջրընդունիչ վաք հատող փողոցներում ՊԿ2+83, ՊԿ7+80** | | | | |
| 1 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0 կմ | մ3 | 1 | 2,25 | 2,25 |
| 2 | Նույնը Vp 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 1,8 | 2,88 | 5,19 |
| 3 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3), տեղում կուտակումով | մ3 | 0,8 | 0,89 | 0,71 |
| 4 | Ավազակոպճային շերտ h=10սմ | մ3 | 0,70 | 14,42 | 10,10 |
| 5 | Ջրընդունիչների միաձույլ բետոն B20 | $մ^3$ | 1,20 | 138,88 | 166,65 |
| | Ամրան A500c Φ12 | տոն | 0,0106 | 409,08 | 4,35 |
| | Ամրան A500c Φ 8 | տոն | 0,0198 | 409,08 | 8,10 |
| 6 | Մետաղական ցանց | տոն | 0,5808 | 400,9 | 232,87 |
| | Անկյունակ 63x6մմ 1գծմ-5.72 կգ | գծ.մ | 28,9 | 3,439 | 99,44 |
| | Անկյունակ 70x7 1գծմ-7.39կգ | գծ.մ | 20,0 | 4,264 | 85,29 |
| | Ամրան A500c Φ25 | տոն | 0,2676 | 417,3 | 111,66 |
| 7 | Քսուկային ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 7,6 | 1,45 | 10,99 |
| 8 | Հետադարձ լիցք ձեռքով | մ3 | 0,8 | 2,29 | 1,83 |
| | **6. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **739,423** |
| **VII** | **Մետաղական խողովակներ d=325մմ;ՊԿ 1+60, ՊԿ 7+35, ՊԿ 7+99** | | | | |
| 1 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0կմ | մ3 | 6 | 2,25 | 13,48 |
| 2 | Նույնը Vp 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 6 | 2,88 | 17,29 |
| 3 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3), տեղում կուտակումով | մ3 | 15 | 0,89 | 13,31 |
| 4 | Ավազակոպճային շերտ h=10սմ | մ3 | 1,80 | 14,42 | 25,96 |
| 5 | Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 18,36 | 2,22 | 40,80 |
| 6 | Մետաղական խողավակների տեղադրում d=325մմ 1գծ.մ =47,2կգ δ=6մմ | գծ.մ | 18,0 | 37,8 | 680,40 |
| 7 | Ջրհորի միաձույլ բետոն ,B 15 | $մ^3$ | 4,86 | 96,13 | 467,19 |
| 8 | Ջրհորի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 26,4 | 1,45 | 38,19 |
| 9 | Հետադարձ լիցք բուլդոզերով | մ3 | 12,0 | 1,10 | 13,20 |
| 10 | Հետադարձ լիցք ձեռքով | մ3 | 3 | 2,29 | 6,87 |
| | **7. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **1316,698** |
| **VIII** | **Մետաղական խողովակ d=(1520x3)մմ;ՊԿ 0+48** | | | | |
| 1 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ | մ3 | 4 | 2,25 | 8,99 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մինչև 5.0 կմ | | | | |
| 2 | Նույնը Vp 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 24 | 2,88 | 69,17 |
| 3 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3), տեղում կուտակումով | մ3 | 20 | 0,89 | 17,74 |
| 4 | Ավազակոպճային շերտ h=10սմ | մ3 | 3,88 | 14,42 | 55,97 |
| 5 | Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 | մ3 | 21,40 | 130,53 | 2793,26 |
| 6 | Թևերի կառուցում միաձույլ բետոնից B20 | մ3 | 4,00 | 80,42 | 321,69 |
| 7 | Վաքի և ատամի կառուցում միաձույլ բետոնից B20 | մ3 | 11,54 | 99,41 | 1147,21 |
| 8 | Քսուքային ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 27,0 | 1,45 | 39,06 |
| 9 | Հետադարձ լիցք բուլդոզերով | մ3 | 18,0 | 1,10 | 19,80 |
| 10 | Հետադարձ լիցք ձեռքով | մ3 | 2 | 2,29 | 4,58 |
| | **8. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **4477,461** |
| **IX** | **Հենապատեր** | | | | |
| | **Հենապատ ՊԿ 2+73 - ՊԿ 2+88** | | | | |
| 1 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0կմ | մ3 | 4 | 2,25 | 8,99 |
| 2 | Նույնը Vp 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 26 | 2,88 | 74,93 |
| 3 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3), տեղում կուտակումով | մ3 | 22 | 0,89 | 19,52 |
| 4 | Ավազակոպճային նախապատրաստական շերտ h=20սմ | մ3 | 3,60 | 15,23 | 54,84 |
| 5 | Հիմքի միաձույլ բետոն B20 | մ3 | 15,6 | 78,40 | 1223,09 |
| 6 | Իրանի միաձույլ բետոն B20 | մ3 | 24,75 | 80,42 | 1990,43 |
| 7 | Ցամաքուրդ պատի հետևից | գծ.մ | 15,0 | 17,10 | 256,55 |
| 8 | Ցամաքուրդային խողովակներ (d=15սմ պոլիէթիլենային) | գծ.մ | 6,0 | 6,39 | 38,33 |
| 9 | Ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 45,0 | 1,45 | 65,10 |
| 10 | Հետադարձ լիցք բուլդոզերով | մ3 | 26,0 | 1,10 | 28,60 |
| 11 | Հետադարձ լիցք ձեռքով | մ3 | 2 | 2,29 | 4,58 |
| | **Հենապատ;ՊԿ 3+00 - ՊԿ 3+60** | | | | |
| 1 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0կմ | մ3 | 9 | 2,25 | 20,22 |
| 2 | Նույնը Vp 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 42 | 2,88 | 121,05 |
| 3 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3), տեղում կուտակումով | մ3 | 33 | 0,89 | 29,28 |
| 4 | Ավազակոպճային նախապատրաստական շերտ h=20սմ | մ3 | 5,10 | 15,23 | 77,69 |
| 5 | Հենապատի հիմքի միաձույլ ե/բետոն B20 | մ3 | 20,40 | 82,41 | 1681,24 |
| 6 | Հենապատի իրանի միաձույլ ե/բետոն B20 | մ3 | 12,00 | 98,33 | 1180,00 |
| 7 | Ամրան A500c Φ12 | տոն | 1,007 | 409,08 | 411,94 |
| | Ամրան A500c Φ 8 | տոն | 0,8088 | 409,08 | 330,85 |
| | Ամրան Ac1 Φ8 | տոն | 0,1109 | 425,45 | 47,19 |
| 8 | Քսուքային ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 111,0 | 1,45 | 160,58 |
| 9 | Հետադարձ լիցք բուլդոզերով | մ3 | 30,0 | 1,10 | 33,00 |
| 10 | Հետադարձ լիցք ձեռքով | մ3 | 3 | 2,29 | 6,87 |
| | **Հենապատ;ՊԿ 4+09 - ՊԿ 4+21** | | | | |
| 1 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0 կմ | մ3 | 14 | 2,25 | 31,45 |
| 2 | Նույնը Vp 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 25 | 2,88 | 72,05 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3), տեղում կուտակումով | մ3 | 36 | 0,89 | 31,94 |
| 4 | Ավազակոպճային նախապատրաստական շերտ h=20սմ | մ3 | 3,36 | 15,23 | 51,18 |
| 5 | Հիմքի միաձույլ բետոն B20 | մ3 | 18,96 | 78,40 | 1486,52 |
| 6 | Իրանի միաձույլ բետոն B20 | մ3 | 20,40 | 80,42 | 1640,59 |
| 7 | Ցամաքուրդ պատի հետևից | գծ.մ | 12,0 | 17,10 | 205,24 |
| 8 | Ցամաքուրդային խողովակներ (d=15սմ պոլիէթիլենային) | գծ.մ | 5,2 | 6,39 | 33,22 |
| 9 | Ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 51,0 | 1,45 | 73,78 |
| 10 | Հետադարձ լիցք բուլդոզերով | մ3 | 33,0 | 1,10 | 36,30 |
| 11 | Հետադարձ լիցք ձեռքով | մ3 | 3 | 2,29 | 6,87 |
| 12 | Քայքայված պատի քանդում, մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0կմ | մ3 | 14 | 2,88 | 40,35 |
| | **Հենապատ;ՊԿ 4+44 - ՊԿ 5+44** | | | | |
| 1 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5.0կմ | մ3 | 15 | 2,25 | 33,70 |
| 2 | Նույնը Vp 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 70 | 2,88 | 201,75 |
| 3 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3), տեղում կուտակումով | մ3 | 55 | 0,89 | 48,80 |
| 4 | Ավազակոպճային նախապատրաստական շերտ h=20սմ | մ3 | 8,50 | 15,23 | 129,48 |
| 5 | Հենապատի հիմքի միաձույլ ե/բետոն B20 | մ3 | 34,0 | 82,41 | 2802,07 |
| 6 | Հենապատի իրանի միաձույլ ե/բետոն B20 | մ3 | 20,00 | 98,33 | 1966,67 |
| 7 | Ամրան A500c Φ12 | տոն | 1,6783 | 409,08 | 686,57 |
| | Ամրան A500c Φ 8 | տոն | 1,3479 | 409,08 | 551,41 |
| | Ամրան Ac1 Φ8 | տոն | 0,1849 | 425,45 | 78,65 |
| 8 | Քուլքային ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 185,0 | 1,45 | 267,64 |
| 9 | Հետադարձ լիցք բուլդոզերով | մ3 | 50,0 | 1,10 | 55,01 |
| 10 | Հետադարձ լիցք ձեռքով | մ3 | 5 | 2,29 | 11,45 |
| | **Հենապատ;ՊԿ 6+67 - ՊԿ 6+82** | | | | |
| 1 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3) , բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ մինչև 5,0 կմ | մ3 | 6 | 2,25 | 13,48 |
| 2 | Նույնը Vp 5.5 կարգի գրունտի համար | մ3 | 12 | 2,88 | 34,58 |
| 3 | IV5.4 կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0,65մ3), տեղում կուտակումով | մ3 | 18 | 0,89 | 15,97 |
| 4 | Ավազակոպճային նախապատրաստական շերտ h=20սմ | մ3 | 2,34 | 15,23 | 35,65 |
| 5 | Հիմքի միաձույլ բետոն B20 | մ3 | 9,84 | 78,40 | 771,49 |
| 6 | Իրանի միաձույլ բետոն B20 | մ3 | 9,90 | 80,42 | 796,17 |
| 7 | Ցամաքուրդ պատի հետևից | գծ.մ | 15,0 | 17,10 | 256,55 |
| 8 | Ցամաքուրդային խողովակներ (d=15սմ պոլիէթիլենային) | գծ.մ | 9,0 | 6,39 | 57,50 |
| 9 | Ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ2 | 30,0 | 1,45 | 43,40 |
| 10 | Հետադարձ լիցք բուլդոզերով | մ3 | 16,0 | 1,10 | 17,60 |
| 11 | Հետադարձ լիցք ձեռքով | մ3 | 2 | 2,29 | 4,58 |
| | **9. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **20454,521** |
| X | **Անվտանգության էլեմենտներ** | | | | |
| | **Նշաններ** | | | | |
| | Ճանապարհային նշանների տեղադրում մետաղական սյան վրա | հատ | 16 | 10,20 | 163,27 |
| | Մետաղական խողովակ 57x4մմ | գծ.մ | 64 | 3,37 | 215,40 |
| | բետոն B15 | մ3 | 1,68 | 58,77 | 98,74 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Առավելության/2.1/ | հատ | 10 | 27,49 | 274,91 |
| | Առավելության/2.4/ | հատ | 6 | 25,53 | 153,16 |
| | **Նշագծում** | | | | |
| 1 | Երթևեկելի մասի նշագծում թերմոպլաստով h=3մմ հաստությամբ , լուսանդրադարձիչ գնդիկների կիրառմամբ/հոծ գիծ 1.2/ | մ2 | 201,6 | 10,50 | 2116,80 |
| | **Արգելափակոցներ** | | | | |
| 1 | Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում /թիթեղի հաստությունը 4մմ, կանգնակների քայլը 2մ/, ներկումով | գծ.մ | 60 | 30,50 | 1830,00 |
| | **10. Ընդամենը /հազ. դրամ/** | | | | **4852,269** |
| | **Ընդհանուրը /հազ. դրամ/** | | | | **103980,15** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Քաջարանի համայնքապետարան
ք. Քաջարան, Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն վարչ.
հհ 900312622021
հհ 900312000327
հվհհ 09426045

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ Կապան Մ.Հարությունյան 1Ա/5
«Արդշինբանկ» ԲԲԸ Կապանի մ/ճ
հհ 2470800045720000
հվհհ 09400653

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 15 » հուլիս 2026 թ. կնքված
ՔՀ-ԲՄԱՇՁԲ-26/02-02 ծածկագրով պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 2՝ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԻ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

| N ը/կ | Կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Լաբորատոր աշխատանքներ | | | | | | | | | | | | |
| 2 | Հողային աշխատանքներ | | | | | | | | | | | | |
| 3 | Հենապատեր | | | | | | | | | | | | |
| 4 | Վաքեր, ջրընդունիչներ | | | | | | | | | | | | |
| 5 | Խողովակներ | | | | | | | | | | | | |
| 6 | Ճանապարհային պատվածք | | | | | | | | | | | | |
| 7 | Կողնակներ | | | | | | | | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Քաջարանի համայնքապետարան
ք. Քաջարան, Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն վարչ.
հհ 900312622021
հհ 900312000327
հվհհ 09426045

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ Կապան Մ.Հարությունյան 1Ա/5
«Արդշինբանկ» ԲԲԸ Կապանի մ/6
հհ 2470800045720000
հվհհ 09400653

/ստորագրություն/
Կ.Տ

* Աշխատանքների կատարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պայմանը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների գնման դեպքում:

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ յուրաքանչյուր անգամ երկկողմանի հաստատված կատարողական ակտերի, ընդունման-հանձնման արձանագրությունների, ակտերի և այլ փաստաթղթերի հիման վրա, այդ թվում** |
| | | | Ընդամենը |
| 2. | 45231177/2 | Քաջարան համայնքի Գեղի գյուղի գլխավոր փողոցի վերակառուցում | 103 880 150 |

**Սույն գնման գործընթացը կազմակերպվում է ՀՀ համայնքների տնտեսական եվ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:**
**Ֆինանսավորումն իրականացվում է համայնքային (45%) և պետական բյուջեներից (55%)՝ համապատասխանաբար մասնաբաժիններով:**
**Աշխատանքների կատարման դիմաց վճարումն իրականացվում է սկզբում համայնքի մասնաբաժնի չափով, այնուհետև աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորումը հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց և ֆինանսական միջոցներ ստանալուց հետո իրականացվում է ֆինանսավորում՝ պետական բյուջեի մասնաբաժնով:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Քաջարանի համայնքապետարան | ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊԸ |
| ք. Քաջարան, Լեռնագործների 4 | ՀՀ Սյունիքի մարզ Կապան ՄյուՀարությունյան 1Ա/5 |
| ՀՀ ՖՆ գործառն վարչ. | «Արդշինբանկ» ԲԲԸ Կապանի մ/ճ |
| հհ 900312622021 | հհ 2470800045720000 |
| հհ 900312000327 | հվհհ 09400653 |
| հվհհ 09426045 | |
| ____________________ /ստորագրություն/ Կ.Տ | ____________________ /ստորագրություն/ Կ.Տ |

*Հավելված թիվ 4*
*«  »   20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ __________________________
հվհհ ________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ________________
հհ____________________________
հվհհ__________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«        »            20   թ.  կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի

Պատվիրատուի անունը                    Կապալառուի անունը

(այսուհետ՝ Կապալառու) միջև 20    թ. __________________________ -ին կնքված N ________________

պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն